

ԵՐՆԱԿ

ԵՐՆԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:

Փիֆիլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբարութեանը դիմում են ուղղակի
Դեմուտ. Редакция „Мшакъ“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10-3 ժամ.
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

„ԵՐՆԱԿ“

ԴՐԱԿԵՆՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԿԱՆ ԼՐԱՅԻՐ

1879 թւին

ԵՂՏԵՄԵՐԱԿԱՆ ԼՐԱՅԻՆ ՕՐ, բացի տոն և տոներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի դիւրը և պրօզրամման նոյն են մնում: Ենք ստանում ենք ԱՆՓՈՒՆԵՆ ՀԵՒՄԱՆՔԻՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ. է, կես տարվանը 6 ռուբլ.: Գրվել կարել է ՄԻՍՅՆ ԽՍԲԱԳՐԱՍԱՆ մէջ:

ԼՐԱՅԻՆ ԶԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Երբքին տեսութիւն. Գեղարուեստական հանգուտ. Նամակ Բագուից, Նամակ Երեւանից, Նամակ Մագրասայից, Երբքին լուրեր. Արտաքին տեսութիւն. Ֆրանսիա. Նամակ Թիւրքիայից: «Մշակ» հեռագիրներ. 8-յոսարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԻՑ

Մարդկանց բնութեանը կրթող ու մեղմանող միջոցների մի տեսակն էլ գեղարուեստներն են, որ իրանց իգնայական գեղարվեստեան հարծուութիւններով յափշտակում են մեր նրբութեանը և աշխարհի տիրումը ընկողման միտքը և վեր հանում մեզ այն մարդը և գործը գեղարուեստի օգի մէջ ուր մենք տեսնում ենք մեր աչքի առաջին մարմնացած մեր կեանքի նպատակի գոգափարները առանց որ և է արատի կամ թերութեան Թէ գեղեցկութիւնը ինչ բան է, ցոյց են տալիս մեզ քաջահուն պատկերահանի մտտերը մի քանի կանգուն կտաւի վրա:

Երբայցում գրիթէ խրաքանչիւր մի փոքր ինչ նշանաւոր քաղաքում կը գտնէք դուք գեղարուեստից արդիւնների թէ ընդարձակ թէ սահմանակ հանդիսարաններ ժողովածուներ: Եւ այդ աղիքը յաճախում է ժողովուրդը մեծ մեծ խումբերով, սասանայով իր արտի և մտաց համար կրթիչ սնունդ և շատ անգամ իր ձգտանց համար ուղղութիւն, և իր թուլացած եռանդան համար դժ և նոր գուարթութիւն:

Բայց մենք երբէք չենք կարծել և մեր մեղքովն էլ չենք անցել թէ մեր Թիֆլիսն էլ Կովկասու ձիւնապտու լեռանց այս կողմերը անցածուած բոլոր քաղաքակրթութիւնների լուսաւորարար ազդեցութիւններից և միջոցներից, կարող է իր մէջ ունենալ մի անզամ մի այդպիսի ժողովածու գեղարուեստական բարձրագոյն նուրը նկարակերտութիւններ: Եւ ահա բուն պատճառն էլ դա էր որ «Մշակ» մէջ և ուրիշ տեղ Միջոցեանս

ցի նկարների ժողովածուի յայտարարութիւնները կարգաւոր, չէի կարող երեւակայել թէ Թիֆլիսում իրաւ կը լինի մի այդպիսի բան, որն այսօր մի անգլիացի ծանօթիս հետ մեծաւ գուարծութեամբ տեսներ: Միայն հետաքրքրութիւնն էր որ մեզ երկուսիս շարժեց մէկ անգամ մտնել Միջոցեանցի թանգարանը, ու պէտք է խոստովանել որ ոչինչ մասնաւոր բան չէինք սպասում, մեր սպասածն էր մի քանի հին աննշան պատկերներ աւերակ եկեղեցիների պատերից պոկած առանց որ և է ճաշակագիտական կանոնի իրար մօտ շարած: Բայց ի՞նչ գարմանք: Ինչ կանոնաւոր բաժանում ու յարմարութիւնս ի՞նչ հիւսնակ նկարներ: Ոմանք նկարչութեան ամենաերեւելի արուեստագետաց գործ, օրինակի ազգաւ Սայվաթօր-Բոզա, Ռուբէնս, Մուրիլլօ, Կարաջի, Կարլօ Բոլչի, Տիւրոպիթիօ, և ուրիշ հին և նոր առաջնակարգ նկարչների քանակն աշխատանքները: Իրաւ գեղեցիկ են սենեակները, շատ յարմարեցրած ամեն կերպիւ և ամեն կողմանէ:

Ի հարկէ կարել էր այդ թանգարանը աւելի ևս կատարելագործեալ փափագել, այսինքն որ գեպի պատահանների կողմ բնու պատկերներ կախված չը լինէին, որովհետեւ լոյսը խողցնում է աչքերը, և գրեթէ այն կողմի գեղեցուած նկարները անկայելի են մնում յաճախողին, և որոնցից կարելի էր մի շորթորդ սննեակ զարգարել յօգուտ թանգարանի և յաճախողաց:

Պակաս է նաև մի տպած ցուցակ որ ծանօթացներ հտտարարութիւնը պատկերների արժանեաց ու նշանակութեանց հետ. այն մի քանի կցկուտր բացատրութիւնք որ ստացանք շատ թերի էին: Բնականապէս չէ կարելի մեղադրել պ. Միջոցեանցին, թէ ինչու չունի նա իր թանգարանի մէջ Քորէճճիօ Ծանօթ. յը, Միլթէ—Անճէլօ, Բաֆայէլ և այլն. և ինչու պատկերների մի նշանաւոր մասը պատճէններ են և ոչ բուն իսկ նկարներ: Բայց այդու ամենայնու շատ գոհ և հիացած մնացինք այդ ժողովածուի վրա, որ ըստ մեզ բոլոր Ասիայում թերևս առաջինն է:

Անտարակոյս կարելի չէ Միջոցեանցի թանգարանը բաղադրող Գրեգորի, Միլեիսի, Պետերուրզի Երմիստի և Երբայցի միտ

մայրաքաղաքաց սոյն օրինակ թանգարանների հետ Բայց Թիֆլիսի այս գեղեցիկ թանգարանը յաճախողը թէ և Երբայցի ամենահարուստ ժողովածուներն էլ տեսած լինի, արան ևս տեսնելով շատ գոհ կը մնայ:

Մանաւանդ հրաւիրում ենք քաղաքիս ծընողներին և ամեն ազնիւ մտածող և զգացող անձանց, որ անյապող յաճախեն Միջոցեանցի գեղարուեստական ժողովածուն, և ամեն իրանց հետ իրանց որդիքը և երիտասարդները. յոյս ունենք որ այս պատկերաց կրթիչ ազդեցութիւնը աւելի մեծ կը լինի ամիսներով զարդնելում կարգաւոր, և հաւատար կը լինի մի կրթողական նպատակով արած ծանապարհորդութեան: Եւ աւելի լաւ կը լինի ամսով տոնակ առնել և շարաթը քանի մի անգամ յաճախել, որ շատ և շատ օգտակար է:

Բայց ի՞նչ տեսնել որ մի քանի քայլ այնտեղից անցած Գուլիբեան հրատարակի վրա տակտակամա՞ծ պայտորամայիս առաջին մի խուռն բազմութիւն նկատեցինք, որ երկուշարթի առաւօտից սկսած մինչև շարաթի վերջն գիշերը այնտեղից չէ հետանում: Ամաչելով պէտք է ասած որ 30 կոպէկը չը ինայեցինք, այնտեղ էլ մտել էինք, բայց այդ բոլոր շնուութիւնը իր պարունակութեամբ չարժէ պ. Միջոցեանցի նախասենեակում կտակած մի քանի պատկերաց և ոչ մէկ հասին էլ:

Մենք դրանով ընաւ չենք ուզում պատրաստել այն օգտնորամանս. բայց զարմանում ենք քաղաքիս ընդհանուր ժողովուրդեան կողմ ճաշակի վրա, որ 30 կոպէկ տուող այդ տեղ յաճախողներ հարիւրներով են գտնվում ամեն օր, բայց Միջոցեանցի թանգարանի գեղարուեստից հրաշարծութիւնների համար այն չինք 30 կոպ. տուող և անասման մասաւոր և ազնիւ ճաշակի կիրթ ազդեցութիւնը վայելող չը կայ:

Ա. Ամիրխանեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹԻՑ

29 նոյեմբերի

Մեր քաղաքը բազմամարդութեան ճ և վաճառաչութեան կողմանէ թէ և խրաքանչիւր օր մեծամեծ քայլերով է առաջ գնում, բայց ապրուստը դժուարանում և անանելի է դառնում: Եթէ մինչև անգամ միւս բոլոր կենսական պիտուքների սաստիկ թանգութիւնը առժամանակ մտանալու լինէք՝ այնու ամենայնու բնականաբանների և խնամարարների խնդիրը մենակ բուսական է մեզ սարսափեցնելու. նրանց գներն այս մի տարվայ ժամանակը երկրորդ կեսումը կրկնապատկուել և եռապատկուել են յանկարծակի: Բացի տանուտերերից, որոնք շատ գոհ են ինչու զամանակներից, մարդ չը կայ այստեղ որ անդազար տրանջարիս և տանջուկիս չը լինի այս մասին. փոքր ի շատ ասպնով վիճակ և յաջողակ գործ ունեցողների համար դեռ ոչինչ, բայց արուեստաւոր, գործակատար, մշակ և մանրավաճառ դասերն իսպառ յուսահատութեան մէջ են, որովհետեւ իրանց շարժաւոր վատակից չափազանց վարձեր վճարելուց յետոյ այնքան չէ մնում, որով կարողանան ասորել և ընտանիք պահել: Կրթութեան գիտելի պակասութիւնն ևս սաստիկ զգալի է. շարաթներով և ամիսներով արոնելով ևս մարդիկ անասելի դժուարութեամբ են կարողանում իրանց կարիքին յարմար տեղ ձարել, այնպէս որ տանուտերերի բազմազմի ազդարարութիւնները,

ստիպանք և դատատանական միջոցները տեսնելով տնկեցներն իսկապէս լաց են լինում անձարութիւնից, որ իրօք պատահած է շատերին: Այս տարւապի պատճառը թէ և տներն սակաւութիւնն է, բայց տանուտերը ևս հզանազան խորամանկ հնարներով միջոց այնտեղ են աւելի զօրացնել նորան: Գիցողք թէ մի վաճառք կամ տուն ունեւ վարձած, այլ և այլ անձեր առանձին առանձին գալիս են դրոյից նայում և կամ ներս մտնում, հարցնում կենսաւոր ժամանակը, վարձը և այլ պայմանները, որոնք չունի թանգութեան վրա և գնում, բայց նրանք տուն վարձողներ չեն, այլ տանուտերի կեղծ արքանեակները՝ նորա պատուէրով եկած: Այս շահակ կրկնվող խաղից կախածներով գիմում են գրեթէ, որ ապագայի համար ապահովեցնեն իրենք: Եւ զարմանալի անտարբերութեամբ իր հօր գինն է վրա դնում, որը իր թէ տալիս են որդիները: Հաղար աղաչես՝ նա չէ կակողմ ու գիշարնում, ճարահատած համաձայնում ևս պատանջած գումարը տալ և խնդրում են թղթով հատարակ պայմանը սակախ նա հրաժարվում է աւելի փոքր խօսքս պայմանագիր է, որ երբէք չէմ փոխի, այդ գնով որքան ժամանակ կամենաս կացիր: Հաւատացած նստում ևս. մէկ էլ տեսնիս մի ամսից յետոյ հօր գինն էր դարձեալ բարձրացել է... Ինչ անես, ստիպված են սակաւապետութիւնը ծայրայեղութեան հասցնել և աղայի կամքը կատարել. փողոցներում հօ չէ կարելի բնակել: Ահա այսպիսի և այլ բազմապատկակ հարձակներ են գործածում ամենտեղ, ամիսներն ու շաբաթը չը գարձնելով ժողովուրդի նեղութիւնը: Այս հարցը և մի քանի ուրիշ հանգամանքներ ի նկատի ունեղով պոլիցիան միջնորդել է քաղ վարչութեանը, որ նա խորհրդարանին առաջարկէ սնորհութիւն անել տակաւաշինութեան բազմաթիւ գործարանները քաղաքից դուրս տանելու համար. այս խելացի կանգրութիւնը եթէ իրադրմի որ մեք բարիք մտային հասարակութեանը, որովհետեւ կարճ միջոցում հին շէնքերի նորոգվելով և նորերի կանգնելով բնակարաններ և խանութներ ճարելը կը հեշտանայ և առողջապահական ու այլ պայմաններ կը լրատան բաւական:

Անցեալները ուս սիրողների մի խումբ «Մ. ընկ» զանդիւնում ներկայացրածն էր տուրի յօգուտ չըբար գեղարուեստների մասում ևս ոչինչի թէ վարձ են վեր պուել ընդ ամէնը 5 արքայի ամէն խողներ պախարակում են այն իբրև անբող վարմանք, եթէ իսկապէս Եւրոպի է հասարակութիւնը իրաւունք ունի տրանջարու, որովհետեւ կամ պէտք է սովորական վարձ ստանային, ինչպէս հայերէն ներկայացուցներ համար առաջել են թէ ընկ և թէ այլ, և կամ թէ է պէտք է ձրի առած լինէին զանկիւր, ինչ բան է Եւրոպիւն...:

Փօթի-թիֆլիսեան երկաթուղու կանաչապիլը և նորա տէրութեանական վերանորոնչ նորոնումն ևս կայտեղ Բագու-Բալախանի երկաթուղու շինութեան համար Այս ծանապանի բողոր հարկաւոր պիտուքները գրեթէ անայլած են, մնացածներին էլ սպասում են: Եւ արդէն գործը սկսված է: շինվում է Երկաթուղին Երեք կայարան է ունենալու. առաջինը սե քաղաքում, ուր կէրոսի գործարաններն են, երկրորդը Սարունչի գիւղում, ուր նաւթի հանքերն են, իսկ երրորդը Մուրախանի գիւղում: Այս և Բագու-թիֆլիսեան երկաթուղիները միմեանց հանդիպուել են Քիչիլի թաթարաբանակ գիւղում: Երկաթուղիներն մեծապէս նպաստելով արքայութեան զարգացմանը և դերացնելով նաւթագործների բանը մի և նոյն ժամանակ սաղապանութեանը մահու հարուած է տալու յանկարծակի. մինչև այժմ շատերը նրանով էին պարապում և լաւ վատակ վեր առնում, որով հաղաբաւոր գեղարուեստների գոյութիւն էր անպակովում: Ի՞նչ կանեն այստեղ անայլապանները. Բագուի և կարգի վաճառարան մը վիճելի չի մեղով պ. նահանգապետին իրաւունք է ինչոքել երկաթուղու կայարանի, գործարանների և քաղաքի մէջ ձի երկ ան թէ ու չի չինել, ապ

րանք և մարդիկ տեղափոխելու նպատակով խնդրագիրը յանձնված է քաղ. վարչութեանը և պ. Վեկիևի և ընկ. պայմանագրութեան նախագիծը տպագրած ուսուցիչին և թափարեհին առանձին տետրակներով բաժանված է բոլոր ձայնավորներին: Չի բերվում ձայնավորները մտաւարագէս 9—10 վերստ է լինելու: Քաղաքային խորհրդարանին առաջարկված է հարցը, որի քննելու համար ահա քանի անգամ է որ նիստ է նշանակվում, բայց գործը չէ վերջանում. երբեմն ձայնավորները թիւր պահաս վիճակով նիստը չէ կայանում, իսկ երբեմն էլ շատ կարճ միջոց տեւելով յանկարծ ընդհատվում է և փակվում, որովհետև ձայնավորներից շատերը աննշմարելի կերպով դանիւնից հեռանում կամ լաւ է սակի փակելու են տուն և օրինական թիւր պահակացիներով և վիճարանութիւնները չարժանակել անհարկն է դառնում: Վարչութիւնը քաղաքի շահերը չլրբանանդութեամբ պահպանելով պ. Վեկիևի նախագիծը դատի փոփոխութիւնները է ենթարկել: Խորհրդարանը ևս իր կողմից փոփոխութիւններ է անում բաւական, այնպէս որ դեռ թիւ այս օգտակար ձեւերակութիւնը վերջի վերջոյ դուրս գայ, մասնաւոր որ ինչպէս շատերը կարծում են ձայնավորներից ուսանող չեն ցանկանում ամենին որ իրագործվի այս միտքը: Եւ այսպէս թէ ձերկաթուղու և թէ բազմաթիւ այլ կարտոր հարցեր մտած են անվճիր քաղաքի ներկայացուցիչներին շնորհով, որոնց վերաբերութեամբ պ. քաղաքագրութիւնը ի պատճառաւ է: Բոլորովին չը գնալ այլ բան է, իսկ փոխառուց յետոյ դուր մի ժամ չը նստած, առանց որ և իցէ իրաւացի պատճառի, ինքնազուրկ ցրվել և գործերը երեսի վրա թողնել զարմանալի և միանգամայն դաշտացուցիչ արարումը է, որին մեր պէս միամիտ ժողովուրդը միայն կարող է համբերել: Արհեստ հասարակաց հաստ, ախտն մեծամասնութեան քուէներ, որոնցով յայտնապէս խաղում են ոմանք, բայց ի հարկէ ժամանակը գայ, երբ քաղաքացու քուէն թանգանալով բարոյապէս աղքատներին իսպառանաւորելի կը դառնայ, և ահա այն օրը մենք երջանիկ կը լինենք:

Կասպիացի
ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ
25 նոյեմբերի

գործէ իր համար: Բայց ընդհակառակը տեսնում ենք որ ամեն բան մեծերից են սպասում: Ամեն քաղաքում տեղական հասարակութիւնը մեծ դեր կարող է խաղալ և մեծ գործութիւն ունի: Նա եթէ կամենայ հասարակական գործերում ամեն բան կարող է անել և շատ գործեր տեսնել: Ընդ քաղաքի մէջ էլ շատ գործող անձեր կան, միթէ չեն կարող նրանք ազգեցութիւնը գործել, միթէ չեն կարող իրանց ներքին անմիթիւր վիճակը բարեփոխել առանց բարձրատեսի անձերի, առանց առաջնորդի և որ և է մի մտորելի և երբեմն թող տաղանդ ունեցող ղեկավարի: Ի հարկէ կարող են, Բայց ինչու անեմ, ասում է մեր հասարակութիւնը, երբ ունենք քաղաքագրութիւն, քաղաքագրութիւն, կաթողիկոս, առաջնորդ, տեսուչ և այլն, պէտք է անպատճառ նոքա գործեն և ոչ մէնք:

Ժողովուրդը տէր է իր վրա, իսկ մեծատերերը գործաւորներ են, եթէ տէրը ինքը չը հոգայ իր պիտոյքը, նա իրաւունք չունի բամբակը գործաւորներին իր անողի և անտարբեր. եթէ հիւանդը ինքը բժիշկ չը հրաւիրէ իր տկարութիւնը բժշկելու, վերջերը դարմանելու և իրան առողջացնելու, բժիշկի ինչ պարտքն է նրան այցելելու և դարմանելու:

Մեր հասարակութիւնը երբ մի գործի ձեռնարկելիս լինի, իսկոյն նրան յետ կը մղի մի առաւել աներկայ ռուծող ոգին և ջեշ ժամանակից յետոյ կը պարզվի թէ որն է այդ ռուծող ոգին, այն է փողը, նրանք ասում են եթէ փող ունենանք ամեն բան կարող ենք գործել, և հասարակութիւնը այդ համարմունքին հետևում է: Բայց մենք կը հերքենք այդ համարմունքը. ոչ թէ փող, այ գործող է պէտք, անձնագործութիւն է պէտք: Մեզ դանում հարկաւոր եղածին չափ փող կայ, բայց հարկաւոր եղածին չափ մարդ չը կայ, գործող չը կայ, ուրեմն մենք պարտաւոր ենք նախապէս մեր բոլոր ոյժով և կարողութեան չափ գործել հասարակութեան, մէջ գործողներ յարուցանել, որպէս զի մեր թանգ միջոցները անող չը գործեն և մեր հասարակութեան անմիթիւր վիճակը չը մնայ իր նախկին դրութեան մէջ:

Ահա, թէ ինչ պէտք է գործի հասարակութիւնը: Մեր կարծիքով գործի սկզբնաւորութիւնը չը պէտք է սպասել քաղաքագրութիւնը, կաթողիկոսից և այլն: Այլ նրանց միայն պէտք է ճանաչել իբրև գործաւորներ, պաշտօնակատարներ, իսկ գործի սկզբնաւորութիւնը ինքը հասարակութիւնը պէտք է որ գործի իրան ոյժի և կարողութեան համեմատ իր ներքին պիտոյքները և թշուառ միջակը բարեփոխել համար, չը սպասելով նախապէս մեծամեծ անձանց օգնութիւններին և յոյսը չը հիմնելով միմիայն նրանց վրա: Այդ անձերը երբ կը նկատեն որ հասարակութեան ձեռնարկը օգտակար է քաղաքային իրջեալին, այն ժամանակը սիրով կօչնեն և ուրախութիւն կը զգան իրանց մէջ մի այդպիսի օգտակար գործին մասնակցելու և օգնելու:

Մենք չենք կարող մի հասարակութեան ստանալու թիւնը դէպի իրջեալական ձգտումները մի առ մի—բացորոշ մեկնաբանել, ըստ որում ընթացողը կարող է մտածել և հասկանալ թէ մեր ներսին հասարակութիւնը մինչև այժմ ինչն է կարող իր անտարբերութեամբ և անհոգութեամբ, և կարող է երևակայել իրան, որ եթէ նրանք հասարակութիւնն էլ թիֆլիսի և այլ լուսաւոր քաղաքաց նման իր կորեաց չափ գործած լինէր և հոգ տարած հասարակութեան կարիքները վրա, այժմ նա էլ մի նշանակութիւն կունենար և նրա մէջ գործված ազգօգուտ իրողութիւնները լրագրաց մէջ խօսելու առաջիկայ կարող էին դառնալ, և իրօք կարող էր նա անկողի պաշտպանել իրան մէջ մարդկային իրաւունքները: Բայց մեր հասարակութիւնը առհասարակ սովոր է պատրաստած սեղանի վրա նստելու և որովայնը լցնելու, թէպէտ անհամ կերակուրներ էլ լինի փոյթ չէ, նրա համար մի և նոյն է: Նա սովոր չէ երբեք ինքը իր անտարբեր համեմատ պատրաստելու և նրանով յաջենալու:

Մեր հասարակութեան հոգսերը մեծ են, ուստի դարմանի համար էլ մեծ գործեր հարկաւոր են, այն էլ հիմնաւոր գործեր: Բողոքական փոփոխութեամբ, անհաստատ և տոկուն եռանդի կատարված գործերը առօրեայ ազդեցութիւն միայն կարող են ունենալ. դրանք բաւական չեն մեր եռամսայի հիւանդ հասարակութեան ցաւերը փարսաւորելու: հասարակութեան ցաւեր եմ ասում, որոնց բոլորովին փարսաւորում համար, հարկաւոր է հաստատ և հիմնաւոր գործի ձեռնարկել և անտարբեր չը մնալ քաղաքային հոգսերը հոգալու: Հաստատ և զվտաւոր համարմունքն

այն է որ հեռանալ այդ ձգտումից—մեծամեծներին վրա յոյս դնելուց: Հասարակութիւնը եթէ կամենում է որ իր ներքին վիճակը բարեփոխի, կրկնում ենք, ինքը պէտք է հոգայ իր պիտոյքը, առանց ի նկատի առնելու մեծամեծ անձանց, այն ժամանակ համողված ենք որ քաղաքային կրթութիւնը իր քայլերը աւելի ընդարձակ կը զնէ և կը տարրաւայ մեր քաղաքի մէջ: Եթէ այդ միակ միջոցը գործարկվի, քաղաքային ենք որ մեր նպատակները կիրագործվեն երբ և իցէ:

Ա.
ՆԱՄԱԿ ՄԱՏՐԱՍՈՒՑԻՑ
2 դեկտեմբերի

Մատրասայի հասարակութիւնը անցեալ սեպտեմբերի 25-ին իր կայացած նիստում վճռեց հետևեալը: «Մենք ներքայ գրեալ Մատրասայի հասարակութիւն, ի նկատի ունենալով մեր ծխական ուսումնարանի նիւթական անապահով դրութիւնը և ջանալով գտնել նրա համար արդենայ նոր աղբիւրներ, այսօր միակամ յօժարութեամբ սահմանեցինք մալ վրակաւոր իրաւունք յիշալ դպրոցի հոգաբարձուաց բանալ մեր գիւղի մէջ ուսումնարանի հաշվով մի խանութ, որի մէջ պիտի վաճառվեն գիւղացիներին համար ամենակարևոր պիտոյքներ, աղ և նաւթ, և բայց այդ կրպակից ոչ ոք պտուհեան իրաւունք չը պիտի ունենայ վաճառ հանելու յիշեալ միջնորդներից, հակառակ դիւրամանում ենթարկված կը լինի այնպիսին որոշեալ սուգանքի»: Այսպէս չենք կարող կատարեալ համակրութիւն չը յայտնել մատրասացոց այսպիսի գովելը և ազգօգուտ ձեռնարկութեան վերաբերութեամբ, որոնք այնքան են զգացել ուսման կարևորութիւնը և անհրաժեշտութիւնը իրանց որդոց, որ ամեն միջոցներ գործ են դնում իրանց ուսումնարանի նիւթական միջոցները աւելացնելու, որով և նրան յառաջադիմութեան և բարեխաղը դրութեան մէջ պահպանելու: Ուրեմն, Մատրասայի ուսումնարանը ստանալով վերոյիշեալ կրպակից զայացած արդիւնքը, սրա վրա աւելացնելով և նրան յատկացած քանի մի արդենայ ազգիւրները, կարող է փոքր ի շատէ բարեփոխել իր նիւթական դրութիւնը, չը նպաստի որ նա առանց բարերար ձեռքերի օժանդակութեան չէ կարող յարատև և անխափան շարունակել իր գոյութիւնը:

Ներկայ ուսումնարան տարվայ սկզբից մի այլ ուսուցիչ ևս վարձվեցաւ, որով ուսումնարանի ծախսը նշանաւոր կերպով աւելացաւ (Մատրասայի ուսումնարանի տարեկան ծախսը հասնում է մօտ 500 ր.), սակայն մի և նոյն ժամանակ նրա ուսումնական մասը բաւական կանոնաւորեալ դիւրք ստացաւ: Մատրասայի ուսումնակարտ մանկոտին, որ մի տարի սըրանից առաջ մի բառ անգամ չէր կարողանում հայերէն լեզուով արտայայտել այժմ գեղեցիկ կերպով խօսում է մայրենի լեզուով, որ մեծ ուրախութիւն և սփոխանք է պատճառում իրաքանչիւր ազգասէր մարդու սրտի:

Մատրասայի ուսումնարանը ունի 80 աշակերտներ, որոնք բաժանված են երեք դասակարգերի և որոնք ուսանում են հետևեալ առարկաները. կըրօն, հայոց և ուսուցող լեզուներ, թուրքախոսութիւն, 5. պատմութիւն, նկատողական ուսում, առուսաց և հայոց վայելչաբարութիւն, եկեղեցական և ազգային երգեցողութիւն:

Եթէ արդարեւ կան ազգիւս մէջ այնպիսի բարեպաշտ և ազգասէր անձերը, որոնք իրանց անխնայ հակողութեամբ որ և է ազգային բարեգործական հաստատութեան գոյութեան զվտաւոր պաշտպան են հանդիսանում, սրանցից մէկը կարելի է համարել նա և մատրասայի ստիճանաւոր Աբրահամ-բէկ Դանիելիանցին (այժմ վերաբնակող Դամախի քաղաքում) և Սարգիս Զանուսեանցին, որոնք Մատրասայի ուսումնաւարտ մանկանց ուսումը և դաստիարակութիւնը, կարճ ևս, իրանց նպատակ ընտրելով, անխնայ կերպով հոգում են իրանց հակողութեան յանձնած ուսումնարանի պայծառութեան և յառաջադիմութեան մասին:

Այստեղ հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ևս ասել, թէ ինչ դիւրք են բունած մեր արծ, քահանաները այս ուսումնարանի վերաբերութեամբ: Մեր արծ, քահանաները, այս նախապաշարմունքի թշուառ արքանաւորները, բացի աննաստեսակ շարանեց որդայիներ լաւելու այս դպրոցի յառաջադիմութեան արդիւր և խախան լինելու, իրանց յանդիմութեան չափը

հասցրել են այն կէտին, որ վեհ. կաթողիկոսի հրամանով հաստատած և վերոյիշեալ դպրոցին յատկացրած եկեղեցագաւական 25 դեռետախին վարելահողերի կէս մասը, որը առաջ լիովին գտնվում էր այդ քահանաների իշխանութեան տակ, զլսնում են հասուցանել ըստ պատանելոյն: Չը նայած որ ահա 2 տարի է որ ստացված է վեհափ. կաթ. հրամանը յիշեալ հողերը ուսումնարանին յատկացնելու մասին, այնու առանց նրանք այսքան ժամանակակալ եկամուտը իրանց կանողական անհոգի մէջ ղեռնարկուց զինի այժմ ևս բաց է ի բաց մերժում են յիշեալ հրամանի կատարումը, պատճառ բերելով որ իր թէ իրանք արքաւ են, կառավարվելու միջոց չունեն:

Յանկալի էր իմանալ թէ արդեօք ինչպէս էին կառավարվում նոքա չորս—հինգ տարի սըրանից առաջ, երբ դեռ այդ հողերը նրանց իրաւասութեան տակ չէին գտնվում, և երբ հասարակութիւնը կամենալով վարձատրել իրանց հոգսը հայրերին, ընծայեց նրանց իբրև պարգև այդ հողերը, իսկ այժմ միթէ մեղաւոր է նա, երբ տեսնելով իր դպրոցի նիւթական անախանաւելի դրութիւնը, կամենում է յետ ստանալ նրանցից յիշեալ հողերի կէս մասը: Խորհուրդ կը տայինք մեր արծ, քահանաներին թողնել իրանց այսպիսի անպատիւ վարձուքը, որպէս զի, ինչպէս ասում են, փոխանակ յօնքը չինելու աչքն էլ չը պատառէին, որովհետև ինչպէս հաստատ յայտնի է մեզ, ժողովուրդը մտադիր է, եթէ նոքա դարձեալ կը շարունակեն իրանց անտեղի յամաւորութիւնը, իսկ նրանցից լիովին յիշեալ հողերը և յատկացնել ուսումնարանին:

Այս օրերս մեծաւ շնորհակալութեամբ ստացանք Նիսաւէթուպոլիսի գրիչի պ. Ա. Համափոխից մի հատ «Գոյ Միթիւրիս առակներ» անունով գիրքը, որոյ մասին յայտնում ենք հրապարակաւ մեր խորին երախտագիտութեան հաստատը: Սրանից 10—15 օր առաջ պ. Սարգիս Զանուսեանցը ցանկալով իր հանդուցեալ և համար հոգոյ հաց տալ, յանկարծ ծագում է նրա մէջ մի միտք, այն է այդ նպատակի համարմտադրած փողը փոխանակ իրար և աննպատակ տեղը ծախսելու, ընծայել տեղիս ծխական դպրոցին, սակայն իբրև պարգաւիտ գիւղացի, որը երբեք սովոր չէ իր ազգային և հոգևոր գործերի մէջ որ և է քայլ անգամ անելու առանց իր հոգևոր հօր խորհրդոց և հաճութեան, կանչում է Յարութիւն քահանային և խորհուրդ է հարցնում նրանից իր մտադրութեան մասին: Յարութիւն քահանան սկսում է բազմադիմի կերպով յորդորել և համոզել նրան, որ բոլորովին հրաժարվի իր մտադրութեան իրագործելուց, որը այնքան օգուտ չէ կարող բերել իր հօր հոգև համար, ինչպէս մի հարուստ և փառաւոր հացիկրոյթ, որ նա կը տայ իր հօր հոգև փրկութեան համար: Միամիտ մարդը հրապարակելով քահանայի խօսքերից, թողնում է իր այս ամենազովելի և ազգօգուտ մտադրութիւնը, կատարելով նրա պատուէրը: Արդեօք մինչև երբ պէտք է մեր հողերականները խախան և արդիւր հանդիսանան ազգի յառաջադիմութեան:

Սարգիս Լայաբէկեանց
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «նոյեմբերի 27-ին նահանգական դատարանը մի թուրք մարդասպանի դատապարտեց 8 տարի առանցքի աշխատանքներ կրելու: Երբ դատապարտուածին զինուորները տանում էին դատարանից բանա, նա փախաւ: Զինուորները հրացաններ արձակեցին և սպանեցին դատապարտվածին»:

Ստացանք ՂԱՐՍԻ գրադարանի համար օր. կատարինէ Բասասմեանից վեց հատոր «Փորձահանդիս»:

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ այնտեղի հողերը դպրոցը հետզհետէ բարեկարգվում է: Անցեալ տարվայ անբաւականութիւնների հետքը անգամ չը կայ:

ԳԵՐԵՆԵՂԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ գարնան եղանակ է: Նշանները ծաղկել են, Ամեն տեղ կանաչով ծածկված է:

Մեզ գրում են ԳԵՐԵՆԵՂԻՑ, որ այնտեղ գործիւններ յաճախ են պատանում, կենսական պիտոյքները թանգանում են:

Լուսմ ենք որ ԳԱՆԶԱԿՈՒՄ մի քանի երկ- ասարակներ մտադիր են հայ ներկայացումն տալ:

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են, որ տեղացիք ի- րանց քաղաքային պատգամաւորից հայիւ են պահանջել Նամակագիրը յոյս է յայտնում, որ պ. պատգամաւորը անյապաղ հայիւ կը ներ- կայացնէ:

Հաքաթ ղեկավարներ 9-ին Գողթբուռ եղ- րայրներ թիճալիսի ֆրանսիական դիրկում տուին կանայ Սառանայ նշանախաղը, ու բա- ւական լաւ անցաւ: Իր ճարպիկութեամբ աչքի էք ընկնում կրան Զերեաթ: կանանց պարը շատ գեղեցիկ էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

«Temps» լրագրում կարողմ ենք հետե- ւեալ լուրերը:

Կեկտեմբերի 4-ին չորեքշաբթի օրը կը կատարվի Փարիզի բժշկական մասնի նոր տարրական ուսումնարանի հիմնադրութեան հանդէսը: Հանդէսին կը նախագահէ ժողո- վըրական լուսաւորութեան միմիտոր պ. Բար- դան:

Վետարմաք հրատարակել են թէ սենա- տոր Օսկար Լաֆայետը Էլիսեան դաշտերի ճիւղի կիրակի օրվայ ժողովին ներկայ պետք է լինի: Պ. Լաֆայետը վարուց է արդէն որ հրաժարվել է Փրանս-ամերիկական մասնա- ժողովի մասնակցութենից, հետեւարար և այս ժողովին ներկայ չէ կարող լինել:

Հինգշաբթի օրը կայացաւ Փրանսիական ճեմարանի շաբաթական նիստը ժոհն Լը- մուանի նախագահութեան ներքոյ:

Վեմարանը մի կարճ վեմարանութենից յետոյ, վճռեց, հետեւեալ նստին ղեկավար- րերի 26-ին թողնել Կիւպանըի փոխարէն նոր անդամ ընտրութիւնը:

Քաղաքաւարութեան ուսումնարանի քննիչք, պ. Մուտարը մեզ խնդրում է որ մի քանի լրագիրներին հրատարակութեան հակառակ, յայտենք, որ նա ընդհանուր ուսումնարան- ների տեսուչ չէ նշանակված, և թէ պ. Մուտարը այդ կողման կանդիտատ էլ չէ եղել: Վայնում են, որ պ. պատգամաւորը ճար- դիտեն երէկ Վէնա-Մարիի նահանգի ղեկաւոր խորհրդատուութեան պաշտօնից հրաժարվե- ցաւ:

Արձանագրութիւնների և բանախրական ուսման ձեւարանը իր երէկվայ նստում ընտ- րեց հետեւեալ անդամներին պ. պ. Բարբիէ Վէյնարին, Ցուկարին և Շէֆէրին հետեւեալ հանգուցեալ անդամների պ. պ. Ալանի, Մո- գէի և Գարսէն Տասսիի փոխարէն:

Վանտի քաղաքային խորհրդարանը իր և րէկվայ նստում վճռեց հետեւեալը: 1) ոչինչ գումար չը թուղարկել այն միարանութիւն- ների ուսումնարանների ապահովութեան մա- սին, որոնց հիմնադրութիւնը անկանօն կեր- պով և ստիպմամբ է մտցած: 2) Խնդրել պ. կուսակալին իմանալ թէ նահանգների ուսու- մնական ծախսին նայելով, քանի ուսումնարան պէտք է լինի նանաւում: 3) Խնդրել որ նա այդ թիւը 26-ից աւելի չը նշանակէ, որոն- ցից 12-ը տղայոց, 12-ը աղջկերանց և 2-ը բողոքականների համար պէտք է լինեն: 4) Յայտնել որ քաղաքային խորհրդարանը կա- մենում է որ ժողովրդական դպրոցների կառա- վարչները և դաստիարակները աշխարհա- կան լինեն:

Վշտարհահանդէսի չինական պովելիծոնը, որը 2ինաստանի ղեկաւոր գործակատարը նուիրեց հանրապետութեան նախագահին, փոխարեցին Էլիսեան պալատը:

«Progrès libera» լրագիրը ասում է որ մի

տանութ տարեկան երիտասարդ աղջիկ ներ- կայացաւ Տուլուզի դրականական համալսարա- նի քննութեան և բաւական յաջող կերպով քննութիւն բռնեց, այդ քննութիւնը նրան ի- բաւուցը է տալի կանօնաւոր ուսումնող-հի լինելու, հետեւարար և շարունակելու մի և նոյն համալսարանում դաստիարակութիւններ լսելը:

ՆԱՄՍԱԿ ԹԻԻՐԻՍՏԻՑ

Կ. ՊՕԼԻՍ 27 նոյեմբ.

Չէյթուրի դէպքերն միշտ ազդային օրումն ինդիւն, է ամենուրեք Չէյթուրի վրա կը խոսուի. բայց ինչ օգուտ, Չէյթուր կը կործանի և քաջ հայոց արիւնն կը հոսի: Նոյեմբ. 23-ին Կրնէն գիր մը կը խրկուի պատրիարքարան յորում մեծ վէճերը կասէ թէ ձերբակալեալ Նիկողոս եպիսկոպոսն, Արթին վարժապետն և 200 հայ զինուորներն իբր պատամբ իրենց պատիժն պի- տի կրեն. և թէ Նիկողոս եպիսկոպոսն, Արթին վարժապետն և ուրիշ մի ընկեր սոյն պատամ- բութենէ առաջ Պօլիս գալով և անտի Չմիւուրի երթալով քաջակերութիւն գտեր են ու Չէյթուրն դաւանարով պատամբութիւնն յարուցեր են. ձեր- բակալեալներն հարցաքննութեան միջոցին խոս- տովանած են եղեր իրենց Պօլիս գալն: Պատ- ըրարք սրբազանը այս գիրն աւանդով հարկ ե- դած պատասխանը կուտայ և անմիջապէս պ. Չերազն կը խրկէ առ Լէյարդ և ունկնդրութիւն կը խնդրէ: ժամանակը ուչ է, երեկոյեան ժամը 6. դեսպանն կասէ պ. Չերազն թէ ունկնդրու- թիւնն միւս աւուր մնայ. պ. Չերազն խնդրոն կարեորութիւնը կը բացատրէ, գուցէ զիչերն կամ առաւօտն Կրնէն հեռագիր լինի Մարտչ որ Չէյ- թուցիներն հրացանի բռնուին. Լէյարտ կը հա- ճի պատրիարքի հետ տեսնուել, ժամը 8-ին պատրիարքն կերթայ Լէյարտի և երկար տեսակ- ցութիւն մը կունենան. ինչ խօսելներն յայտնի չէ, միայն կը կարծուի որ ֆրանսայի և Անգլիոյ ղեսպանաց միջնորդութեամբ կառավարութիւնը Չէյթուցիներն անմիջապէս հրացանի բռնելու որոշումն ետ ձգած լինի. և կասեն թէ զինուոր- ական առեան մը պիտի դատէ զանոնք: Ահա- լասիկ Չէյթուրին խնդրոն այս կիմակի մէջն է, երբ ֆոզանը Անձեռ փայտ կառավարութեան ղէմ դէնք առած էր Պօլսոյ թերթերն զգուշա- ցան տակ թէ հայք ևս զինուած են, իսկ այսօր անինայ հայերն պատուհասելու կը ձեռնարկէ Օսմ. հայրանամ կառավարութիւնը: Տուրքե- ռու ծանրութիւնը, հայոց կրած տաւապանքներն ալ Չէյթուցիի հայոց համբերութիւնը հատուցին: Օսմ. բանակի զօրապետներն ամեն տեսակ խոր- դախութիւն ի դարձ դրած են Չէյթուրի երեւ- լիներն ձերբակալելու համար: Բանակի զօրապե- տը կը խնդրէ հայոց բանակին որ իրենց մէ- ջէն մի քանի հոգի խրկեն բանակցելու. հայք կարծելով թէ Օսմ. զօրապետը բարոյակամի տէր անձինք են և պատերազմական օրէնքներն կը յարգեն, 30 հոգի կը խրկեն առ Օսմ. բանա- կըն, յորոց և ոչ մին այլ ևս կարող կը լինի վե- րադառնալ: Սոսկ կաթողիկոսն այսպէս կը գրէ պատրիարքարան: Պատրիարք սրբազանը հեռագ- րով աղաչեց Սոսկ Վիրաթի կաթողիկոսին, որ ան- ձամբ հոգնատանէ Չէյթուրի գործոց, Մարտչ եր- թալով....

Հետեւալն բաւական է ապացուցանելու թէ թիւրք կառավարութիւնը ինչ տեսակ բարոյա- կան ունի: 8-7 տարի առաջ տէրութեան պաշտօ- նեայներ Չէյթուրն և շրվակալքը երթալով ժողո- վուրդին կասեն թէ կառավարութիւնը իրենց շատ կարուածոց և հողերու պէտք ունենալով պիտի գնէ, ուստի զիններն ըսին. ժողովուրդը ուրախանալով, բարձր գիներ կասէ, պաշտօ- նեայներն կը գրեն և կուզան Պօլիս. կառավա- րութիւնը ոչ հող կը գնէ և ոչ կարուած, այլ այդ բարձր գիններու վրայ հայոցմէ տուրք կը պա- հանջէ և կանոն մինչև ցայսօր:

Բալուի Պօղոս վարդապետին համար գրած էի ձեզ թէ ինչպէս քաջութեամբ ժողովուրդին շա- հերն կը պաշտպանէ, այս շաբաթ Կրնէն կը գրեն պատրիարքարանը թէ այդ վարդապետը Բալուի ժողովուրդին և միանգամայն Օսմ. կա- րավարութեան շահոց դէմ կը շարժի պէտք է քայն հեռացնել անտի:

Կարինէն եկած նամակներն կիմացեն թէ իս- մայիլ փաշայի կառավարչ լինելէ ի վեր հարս- տահարութիւնը և ոճրագործութիւնը անպակաս են թէպէտ, բայց և այնպէս, փաշայի զրդամբ

ժողովուրդի մէջ հանրագիր մը ստորագրելու ձեռ- նարկեր են. հանրագրի իմաստն է եղել թէ հայք զո՛հ են իմասլիլ փաշայէ և թրքաց հետ իբր եղ- քայր կապերն: Կարնոյ հայերն կը զայրանան այսպիսի հանրագրութեան մը դէմ, կը յուզին, պատերն սպառնալից թղթեր կը փակցեն, վեր- ջապէս առաջնորդը կը միջամտէ, կասէ փա- շային թէ այս հանրագրութիւնը ստորագրել տայն ետ ձգէ ապա թէ ոչ դէշ հետեանքներ կունենայ: Հանրագրութիւնը չը ստորագրուի վերջապէս: Կարնեցի հայոց այս վարժունքը իրենց պատիւ է և ապագային համար աղէկ նշան մը:

Ազգ. վարչութիւնը դարձեալ կանոնաւոր նիստ չը կրցաւ ընել: Ազգ. երեսփոխանական ժողովն որ երկար առեւել միշտ մեծամասնութիւն չը գտներ, այս անգամ, նոյնի 24-ին մեծամաս- նութիւնն չը կրցաւ ղոյացնել և առանց կարեօր գործ մը տեսնելու ցրուեցաւ: Պ. Պէկեան բու- ղաքսլառն հրաժարագիրն տուած է ժողովոյ յանդամակցութենէ:

Կառավարական պաշտօնէից փոփոխութիւնը ղեռնք, արտաքին գործոց և հասարակաց շինու- թեան պաշտօնեայներն յոյներ են, իսկ հայոց մը ոչ ոք. կառավարութիւնը ամեն կերպով թշնա- մական դիրք մը բռնած է հայոց դէմ, և հետզ- հետէ հայերն պաշտօնէ կը հեռացնէ: Չամիչ Օհաննէս էֆէնտի որ լաւ տնտեսագէտ, հմուտ և շատ պատուաւոր և մտաւոր մեծ կարողու- թեան տէր անձ մէ, և հասարակաց շինութեանց և առեւտրական գործոց պաշտօնեայ էր, կը ձգուի իր պաշտօնէն, ղէ հայ է, և իրեն կը յաջորդէ Սաւլա փաշայի պէս դատարկ գլուխ բծիկը, որովհետև թրքամուլ յոյն մէ:

Նոյեմ. 25-ին պատրիարքն նորընտիր մեծ վէճերին չնորհաւորութեան դնաց. պատրիարքի խօսքերուն վէճերն հետեւեալ կերպով պատաս- խանեց: «Հնդահարութեան համար արդարու- թիւնն գործարկելու պաշտօնեայ կարգուեցայ: Իմ տիրոջ Սուլթան Ապղիբ Էնթար խանի կամքն է համայն Օսմ. հպատակաց հաւասար իրաւունքներով ապրելն, այդ կամքն ի գործ պիտի դրուի:

Արդ կրնաք յայտարարել թէ ձեր կրօնական հովանաւորութեան ներքև գտնուող ձեր ազգա- յինք ալ այս սկզբանց համեմատ պիտի կառա- վարուին, և թէ արդարութիւնը ամեն կերպով ի գործ պիտի դրուի:

Իսկ պաշտօնեներուն դատով ամենէն արժա- նաւորները միայն ի պաշտօն պիտի կոչուին: Ամենուս պարոքն է աշխատել որ երկիրնիս ընդհանուր ժողովուրդեան հայրենիքն լինի: Մինչդեռ մզկիթներուն մէջ մենք մեր կրօ- նական պարտքերը կը կատարեմք, դուք ալ ան- զին ձեր եկեղեցեաց մէջ կաղթեմք, սակայն ա- մենք ալ մի և նոյն հայրենեաց զուակներ եմք առանց խտրութեան, մի և նոյն կայսեր հաւատարիմ հպատակներն:

Վիմ տիրող հրամաններն այն ատեն միայն լիօ- վին կատարած կըլլամ երբ այս շաղին մէջ ընթանամ. դարձեալ կը կրկնեմ թէ ես նորին վեհափառութեան բարձր փառադանաց լոկ գոր- ծաղերն եմ և նորին բարձր կարծեաց թարգ- մանն:»

Նորընտիր մեծ վէճերն երբ կըսէ թէ միայն արժանաւորներն ի պաշտօն պիտի կոչուին, հայոց պատրիարքին շատ անքաղաքավար խօսք մը ըրած է, զի երբ հայերն պաշտօններ էր կը հեռացնին ըսել է թէ անարժան էին և պատ- ըրարքն ալ այսպէս կիմացնեն, Նախորդ վե- ճերն Սաֆվէթ փաշա ալ շատ քաղաքավարու- թեամբ չէր վարուէր պատրիարքի հետ, երբ Չէյթուրի խնդրոյն համար պատրիարքն բողոքեց Սաֆվէթի, փնչ դուք ալ զլուսն կառավարու- թիւն եղաք: Կը պատասխանէ Սաֆվէթ. և պատ- ըրարքն (ուրեմն ղեսպանաց ալ պիտի բողոքեն) կըսէ:

Նոր վէճերի ըսած միւս խօսքերն շատ և շատ անգամներ լսեցինք, ամեն եպարքոսէ, ա- մեն սուլթանէ լսեցինք, պառասակական առաս- պելներու կարգն անցած են:

Հայկակ

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՊՍՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՑ

ՀՈՒՄ, 8/20 ղեկամբերի: Նոր կարենտը կազմակերպվեցաւ:

Կ. ՊՕԼԻՍ, 9/21 ղեկամբերի: Ասում են, որ Բ. Կուլար անյապաղ պատասխան կը տայ

իշխան Լօրանօվ-Րոստօփուուն վերջական խա- ղաղական դաշնագրի նախագծի վերաբերու- թեամբ:

ԼԱՀՈՐ, 9/21 ղեկամբերի: Հայերեան անջրից հաղորդում են, որ ղեներալ Մօր մի զօրաբաժնով ուղևորվեցաւ Բազարեան դաշտի մէջ ընակվող անգղիացիներին թշնամի ցեղե- րը պատժելու համար: Լուր կայ, որ Եիր- Աիլ փախել է թողնելով երկրի կառավարու- թիւնը Նախուր-խանին:

ՖԻԼԱՊՅԵԼՖԻՍ, 9/21 ղեկամբերի: Վեսիա և Վե՛րօպատ ուսու կրէսները ղեկամբերի 2-ին կուղևորվին Կրօնադատ ամերիկացի հրամա- նատարներին կառավարութեամբ և կը յանձն- վին ուսմաներին ամերիկական ջրերի սահ- մաններից դուրս:

ՄԱԿԻՑ, 9/21 ղեկամբերի: Երէկ վախ- ձանկեցաւ ուսուաց դեսպան Կուլարեակի:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 10 ղեկամբերի: ПРА- ВИТ. ВѢСТЯ լրագիրը հաղորդում է. Մեծ Իշխան Միխայլ Ալեքսանդրովիչի մկրտու- թեան օրը նշանակված է ղեկամբերի 10-ին Կեներալ Օգորժոփոն շնորհված է Սպիտակ Արժուի շքանշանը սրբով, Կովկասեան փո- խորքայի շարժական դիւանատան գերկետոր իշխան Տրոբեցկոյին Սպիտակ Արժու սրբով, ղեներալ-էյտէնաւ Բերմանին Սպիտակ Արժու, Բաթումի շքանի զինուորական նա- հանգապետ Կոմարովին առաջին կարգի Սաա- նիալ սրբով: Կեկտեմբերի 7-ին հաղոր- դակցութեան միմիտորին ներկայացան ձանա- պարհային հաղորդակցութեան ինտիտուտի ուսանողները միմիտորի համախումբ խնդրե- րով համար, որ յիշեալ ինտիտուտին չէր վերաբերում: Միմիտորը ամբոխից կանչեց ե- րեք մարդ, մեկնից նրանց վարժունքի ա- պօրինութիւնը և ուսանողները անյապաղ ցրվեցան:

Կ. ՊՕԼԻՍ, 9/21 ղեկամբերի: Մուխտար, վախօմ և Աբրիգեն փաշաները յոյն-թիւր- քաց սահմանները որոշող մասնագողի ան- զամներ են նշանակվել: Հէյրեզին-փաշային յանձնված է Ասարիայի ղեկ վերջնական համաձայնութիւն կայացնել Սօլի-Բագարի վերաբերութեամբ:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 11 ղեկամբերի: «Ho- वोе Время» լրագիրը հաղորդում է, որ եր- կաթուղու ձանապարհորդական տունակների հարկը հաւանութիւն է ստացել: Պետական խորհուրդի մէջ երէկ կայացաւ Մեծ Իշխան Միխայլ Ալեքսանդրովիչի մկրտութիւնը: Բաղադր դարդարված էր դրոշակներով, զի- շերը լուսաւորված էր:

ԼՍՆՐՆԵ, 11/23 ղեկամբերի: «Daily News» լրագրին Ալլահաբադից հեռագրում են, որ էմիրը ուսուաց դեսպանութեան հետ հեռանում է Բալիա: Ձեյալաբադի և Կարուլի մէջ գտնված երկիրը գտնվում է կատարեալ անարևոյի մէջ: Ցուկուրները բրիտանական զօրքերից փախչում են սարերը, նրանց առ- բոցները և աները քանդում են:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 11 ղեկամբերի: Նդա- նակը ցուրտ է:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 5 ղեկամբերի: Պետա- կան բանկի 5% տոմսակը առաջին շքանի արժէ 96 p. 62 k., երկրորդ 94 p. 75 k., երրորդ 95 p. 81, չորրորդ 95 p. 87 k., ներ- քին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 238 p., երկրորդ 233 p. 50 k., ա- րևելեան առաջին 92 p. 25 k., երկրորդ 91 p. 37 k., ոսկին 8 p. 54 k.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23 պէնս, ուս- ասց 100 ռուբլ Կերմանիայի վրա 196 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 242 Ֆր.: Տրամա- դրութիւնը համարա է:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 7 ղեկամբերի: Պետա- կան բանկի 5% տոմսակը առաջին շքանի արժէ 96 p. 50 k., երկրորդ 94 p. 50 k., երրորդ 94 p. 75 k., չորրորդ 94 p. 50 k., առա- ջին ներքին 5% փոխառութեան տոմսակը արժէ 238 p., երկրորդ 233 p., արևելեան առաջին 92 p. 37 k., երկրորդ 91 p. 37 k., ոսկին 8 p. 55 k.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա 22¹/₁₆ պէնս: Տրամադրու- թիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 9 ղեկամբերի: Պետա- կան բանկի 5% տոմսակը առաջին շքանի արժէ 96 p. 50 k., երկրորդ 94 p. 50 k., երրորդ 94 p. 50 k., չորրորդ 94 p. 50 k., ներ- քին 5% առաջին փոխառութեան տոմ- սակը արժէ 237 p. 50 k., երկրորդ 232 p. 50 k., արևելեան առաջին 95 p. 6 k., ա- րևելեան երկրորդ 91 p. 37 k., ոսկին 8 p. 59 k.: Լօնդօնի վրա առաւց 1 ռուբլ արժէ 23 պէնս: Ռուսաց 100 ռուբլ Կերմանիայի վրա արժէ 196,25 մարկ., Փարիզի վրա 241 Ֆր. 75 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

ՔԱՐՄՈՒԻՒ ԿՈՒՄՍԱՍՆԻՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՄՍԱՍՆԻՆՆԵՐԻ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՑՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ

Ստանալով և շինելու ԳԱՎԻԼԻՆՈՒՄ ՄԵՐ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻՍՍԻՆ ԱՄՈՂՁ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՈՊ. ԻՍԿ ՓՈՔԻ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ԲԱԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱԼԵՍՏԻՑ ՊՈՒՂԸ 28 ԿՈՊԷԿՈՎ:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՎԱԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆԸ յայտնում է ի գիտութիւն անձերի թիֆլիսի քաղաքային Կուսակցի 1879-1882 թիւը ձայնարարներ ընտրելու համար կանոններ, որ հաստատված են Գուսակցի 1872 թիւի հոկտեմբերի 16-ին

§ 1. Ընտրութիւնների ժամանակամիջոցից մէկ շաբաթ առաջ իւրաքանչիւր կարգի ընտրողներին առանձնապէս իմաց են տրվում ընտրութիւնների անգը: օրը և թիւը յայտարարութիւնների միջոցով, որոնք կը տպվեն բոլոր տեղական լրագրիներում, և նոյնպէս քաղաքի դռնապան մասերում ուստաց հոյոց և վրաց լրագրներով յայտարարութիւններ կայանելով և ուղարկելով այդ յայտարարութիւնները Սոսլիսի վարչութիւնները:

§ 2. Նախն եկող ընտրողները ժողովի քահանայութեան անդամներն են ցուցակի մէջ գրուած կարգով իւրաքանչիւրի ազգանունի առաջ նշանակելով ձայների թիւը և յետոյ ստանում են թէ զանչիմո մուտքի ամսակը և թէ մէկ տպագրված ընկալ կանդիդատներ նշանակելու համար, եթէ նրանք կանխապէս պատասխան չունեն կանդիդատների ցուցակը: Իւրաքանչիւր մուտքի ամսակի վրա նշանակվում են ներկայացնող ձայների թիւը:

§ 3. Ընտրողները մտնելով նիստի գահի վրա ժողովի նախագահին ներկայացնում են ձայնարարներ առաջարկված կանդիդատների ցուցակը, որը նախագահը գցում է ներկայ եղող ընտրողների ներկայութեամբ ուրնայի մէջ, և ապա նախագահի ժողովը բացելուց կէս ժամ յետոյ, սկսվում է ցուցակների որոշումը և ընդհանուր կանդիդատական ցուցակ կազմելը: Ուրնայի մէջ ձգած ցուցակների որոշելը սկսելուց յետոյ, նոր ցուցակներ չեն ընդունվում:

§ 4. Ձայնարարներ առաջարկված անձինք, որոնք չեն նշանակված ընտրողական ցուցակների մէջ հանվում են կանդիդատների թիւից:

§ 5. Ժողովը զանչիմում բացի իւրաքանչիւր կարգին պատկանող ընտրողներից և մասնակց ներկայացուցիչներից, ոչ ոք չէ թողարկուած բաց հասարակութիւնը կարող է թոյլ տրված լինել ընտրողներից առանձին, եթէ որ զանչիմո բովանակութիւնը կը թոյլ տայ:

§ 6. Գուսակցութեան համար քուէները բաժանվում են ձայների թիւով ժողովի նախագահից և Ընտրողական ժողովի լիազօր անձերից:

§ 7. Ընտրողները հրապարակում են քուէարկութեան համար գաղտնի կարգով: Այն ընտրողները որոնք գաղտնի քուէարկութիւնը սկսելուց յետոյ նոյնպէս մասնակցում են ընտրութիւնների մէջ: Այն ընտրողը որը քուէարկվում է ձայնարար ընտրվելու համար, երաւունք չունի քուէ ձգել իր քուէարկից արդէ մէջ:

§ 8. Գուսակցութիւնը վերջանալուց յետոյ սկսվում են ձայների հաշիւը, նրանից յետոյ ընտրողները իրաւունք չունեն մասնակցել քուէարկութեանը:

§ 9. Իւրաքանչիւր արկղի մէջ գտնված քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ, ընտրողական թիւերի վրա նշանակվում են իւրաքանչիւր կանդիդատի ազգանունի համարէլ ընտրող և ընտրող քուէների վերջին թիւը: Արկղի քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ թիւերի կարգացումը և ընտրողական ժողովին և ստորագրում են նախագահը և ներկայ եկող ընտրողները:

ԳԵՐՄԱՆՆԵՐԻ ԼԵՁՈՒԻ ԵՆ ԵՐԱՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ փնտաւում է դասերի համար կամ փորձով ընտիրան և ուսուցիչ: Հարցնել կատիկան Կիմնաղայի գործավարին:

4-5

ԳՐԻԳՈՐ ՆԵՍԻՒՆԵՆԻ ՊԵՏՐՈՍՏԻ ՀԵՂՈՒՍՏԵՆԻ ԽԵՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒՆԵՆԵՆԻ ՀՐԿՂԵՐԿԻ ՎՐԸ


ստացվել են մեծ քանակութեամբ ՅՐԱԿԻ ՆԻՏՐԻԿՈՒ ՍԻՔՏԻԿՆԵՐԻ ՇՈՔԵՐ, որտրդական ԱՌԱՒՕՏԵՆԸ ԺՕԿՏԵՆԵՐ, ձեւաւային ՊԱԼՏՈՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երկնայոց հաղուստներ, ՎԵՐԱԲԱՌՈՒՄ ԽՈՒՍՏԵՆԸ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒՆԵՐ զինուորական և քաղաքական հաղուստների համար: Յոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՆԱԳԱՅԻՆ ԿԸ ՄՆԱՆ:

14-75

Լոյս տեսաւ և վաճառվում է ԵՎԵՆՏՐՈՒՄԿԱՆՆԵՐ և պ. Զ. Գրիգորեանցի զրավաճառանոցներում: ԵԹԸՆԵ՛՛ գործ Ֆրանց Զօֆմանի, թարգ. Վիշապազուն գինն, է 40 կ.:

4-6

ՄԵՐԱԿԻ ԽՐԱԿՈՒՄՍԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԿԻ ՏԱՐԱՌՈՒՄ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ԱՄՆՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ: ԵՆ ՐԵԴԱԿՑԻՆ ՄՍԻԱԿԵՆ ԽՄՋԵՆԻ ՐԱՅՈՒՑԻԿԵՆ:



ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ

- Զ ա. ք. Գրիգորեանցի վաճառվում են՝
1. ՄՈՒՐԱՍԵԱՆԵՅԻ — Պատմութիւն Հասարակաց Երկրագոյգինն է . . . 2 Ր.
 2. ՏԵՐԱՐԱՏԱՄԵԱՆ — ՕՐԱՑՈՑՑ 1879 թ. 12 կ.
 3. ՇԵՐՄԱՂԱՆԵՆԵՅԻ. Գ. անեկոտներ 50 կ.
 4. Վիշապազուն. Ուրնէ (Ֆրանց Զօֆման) 40 կ.:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջև այլոց, հետևեալ գրքերը:

| Բ. Կ. | Բ. Կ. | Բ. Կ. |
|---|-----------------|-------|
| 1. Տիւրքերէնի Տոմարագիտութիւն կազմ. 78 թ. 2 25 | անայ. ծախ. 2 60 | |
| 2. Տերեղի Թորոս Լեւոնի, պատ. վէպ 1 | — | 1 20 |
| 3. Խաչաբաշեան բազիլը հայերէնից ուսուցիչներու համար, կազմած (սակաւթիւ). . . 7 | — | 7 60 |
| 4. Ֆրանց Զօֆմանի Ուրնէ, վէպ. — 40 | — | 50 |
| 5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г. 3 | — | 3 40 |
| 6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ 1 | — | 1 20 |
| 7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи. 40 | — | 50 |
| 8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ՛ ինքնուրոյն և թէ՛ թարգմանական, 4. Պօլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնը: | | |
| 9. Շուտով կը սկսվի վաճառվել Երկրի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձեւացեանց օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազանութիւն Գարրիէ Կրքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա: Հասցէն՝ | | |

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

Թիֆլիսի Բաղաքային Դուռնայի վճռի հիման վրա, որ կայացաւ նոյեմբերի 16-ին, ընտրողական ժողովները, եկող չորս տարվայ համար Դուռնայի ձայնարարներ ընտրելու նպատակով, կը կայանան:

I կարգի համար Դեկտեմբերի 12-ին Բաղաքային Դուռնայի դահլիճում, Էղբաբօզի տանը, Սերգիեյսկի փողոցի վրա: Նիստը սկսվելու է առաւօտեան ուղից ժամի 10-ին:

II կարգի համար Դեկտեմբերի 15-ին Թիֆլիսի Սորբանիայի դահլիճում, իշխան Մուխրանսկու տանը, Դոլոլինսկի Պրոսպեկտի վրա: Նիստը բացվելու է առաւօտեան ուղից 10 ժամին:

III կարգի համար Դեկտեմբերի 18-ին նոյնպէս Սորբանիայի դահլիճում: Նիստը բացվելու է առաւօտեան ուղից 10-ժամին:

Բաղաքային Ուպրաւիմո յայտնելով սորա մասին յնդհանաւր գիտութիւն հրաւիրում է I կարգի պ. պ. ընտրողներին 12-ին Դեկտեմբերի, II կարգի 15-ին, իսկ III կարգի 18-ին նոյն ամսի շնորհ բերել վերջիշեալ տեղերը որոշված ժամին ժողովների նստերին:

Ընտրողների այբուբենական ցուցակը ստանալ ցանկացողները կարող են դիմել Բաղաքային Ուպրաւիմոյին ամեն օր բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ:

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣбраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ ко нторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

НА ГОДЪ. НА ПОЛУГОДЪ:

| | | | |
|--|-------|------|-------|
| Въ Тифлисѣ, безъ доставки. | 10 р. | 5 р. | 50 к. |
| » съ доставкой. | 11 » | 6 » | |
| Съ пересылкой по Имперіи | 12 | 6 | 50 |
| За границу по почтовому союзу. | 15 | 8 | |

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлиссѣ въ редакцію *Тифлисскаго Вѣстника*.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ընտրվում է ստորագրութիւն Կ. Պօլսի մեկ սկս լրագրին Տարեկան գինն է Ռուսաստանում քսան րուբլ: Վճարը կանխիկ Ստորագրվել ցանկացողներին ինքնուրում ենք օր առաջ յայտնել իրանց ցանկութիւնը և որոշ հարգել իրանց բնակութեան անդի և հասցէն:

Մտնելով է կազան ՏԱՐԱՌՈՒՄՈՒՄ Վորոնցովիայա Նաբերեժնայա փողոց կանուրջիմո, առն ՁԵ 3:

2-2